Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գիտելիքների տարածման և մեծահասակների կրթության բնագավառում համագործակցության մասին 1997 թվականի հունվարի 17-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունները՝ ի դեմ իրենց պետությունների (այսուհետ՝ Կողմեր),

հաստատելով Համաձայնագրով նախատեսված նպատակներին հասնելու իրենց հետևողականությունը,

հաշվի առնելով, որ Անկախ Պետությունների Համագործակցության միասնական (ընդհանուր) կրթական դաշտ ձևավորելու մասին 1997 թվականի հունվարի 17-ի համաձայնագրով ստեղծվել է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կրթության ոլորտում համագործակցման խորհուրդ,

ղեկավարվելով Համաձայնագրի 11-րդ հոդվածով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված աշխատանքների համակարգումը կատարում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհուրդը, որը ստեղծվել է Անկախ Պետությունների Համագործակցության միասնական (ընդհանուր) կրթական դաշտ ձևավորելու մասին 1997 թվականի հունվարի 17-ի համաձայնագրին համապատասխան»:

Հոդված 2

Սույն Արձանագրության իրականացման համար Կողմերը կհամաձայնեցնեն և անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ կկատարեն Անկախ Պետությունների Համագործակցության միասնական (ընդհանուր) կրթական դաշտ ձևավորելու մասին 1997 թվականի հունվարի 17-ի Համաձայնագրում:

Հոդված 3

Գիտելիքների տարածման և մեծահասակների կրթության միջպետական կոմիտեի մասին դրույթը, որը Համաձայնագրի

անբաժանելի մասն է, դադարեցնում է իր գործողությունը սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից:

Հոդված 4

Գիտելիքների տարածման և մեծահասակների կրթության միջպետական կոմիտեի գործունեության դադարեցմամբ պայմանավորված գույքային և այլ հարցերը Կողմերը լուծում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 5

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին երրորդ ծանուցումն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Նշված ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Կատարված է Քիշինև քաղաքում 2008 թվականի նոյեմբերի 14-ին մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Սույն Արձանագրությունը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից, Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից, Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից, Ղրղզստանի Հանրապետության Կառավարության կողմից, Մոլդովայի Հանրապետության Կառավարության կողմից, Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից, Տաջիկստանի Հանրապետության Կառավարության կողմից:

Հայաստանի Հանրապետության համար Արձանագրությունն ուժի մեջ է մտել 15.06.2010թ.: